ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

03.05.2020 18:55

Շնորհավորում եմ զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներին մասնագիտական տոնի կապակցությամբ: Մայիսի 3-ը այն օրն է, երբ պետք է ամփոփել լրատվական դաշտում տիրող իրավիճակը և լրագրողների մասնագիտական գործունեության շրջանակները, հասկանալ այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց առջև կանգնում են լրագրողներն իրենց ամենօրյա աշխատանքում:

Խոսքի ազատությունը մեր իրականության մեջ ժողովրդավարության ապահովման անհրաժեշտ բաղադրիչներից է և դուք՝ ՁԼՄ ներկայացուցիչներդ, այս կարևորագույն իրավունքի կերտողներն եք:

Մեկ անգամ չէ, որ լրագրողներն ու փաստաբանները հայտնվել են բարիկադի միևնույն կողմում, պայքարել են հանուն արդարության ու արդարադատության հաստատման:

Բարին ընդ ձեզ:

ՀՀ փաստաբանների պալատի

նախագահ

Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })